ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ք.Երևան **«25» մարտ 2024թ.**

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ ՀԱՊՀ-2024/1

Պատվիրատու՝ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ
Մասնակից՝ «Լա Իմպորտ» ՍՊԸ
Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-24/2
Առարկան՝ Համակարգչային տեխնիկա, հեռուստահաղորդումների պատրաստման սարքեր և պարագաներ

Գործի նախապատմություն

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար համակարգչային տեխնիկայի և պարագաների գնման նպատակով 2024 թվականի փետրվարի 19-ին հայտարարվել է «ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-24/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ:

Ընթացակարգին հայտ է ներկայացրել «Լա Իմպորտ» ՍՊԸ-ն (այսուհետև՝ Մասնակից): Մասնակցի՝ «Լա Իմպորտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հետևյալ անհամապատասխանությունները

- հավելված 1.3-ը՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը, կցված չէ:
- 1-ից 10-րդ չափաբաժինների համար լրացված չեն ներկայացված ապրանքի մոդել, ապրանքային նշան, ֆիրմայի անվանում, արտադրողը և տեխնիկական բնութագիր դաշտերը:
- հավելված 1-ը՝ դիմում-հայտարարություն, չի վերաբերվում սույն ընթացակարգին:

«Լա Իմպորտ» ՍՊԸ-ն հանդիսացել է միակ գնային առաջարկ ներակայացրած Մասնակից: Մասնակցի հայտում, արձանագրված թերությունները շտկելու համար նախատեսված ժամանակի ավարտից հետո, արձանագրվել է, որ

- 1-9-րդ չափաբաժինների համար չի լրացվել ապրանքի մոդել, ապրանքային նշան, ֆիրմայի անվանում և արտադրողը դաշտերը
- 10-րդ չափաբաժնի համար առաջարկվող մոդելի՝ NewLineTT7521Q, տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում մասնակցի կողմից լրացված տեխնիկական բնութագրին, մասնավորապես, էկրանի անկյունագծային չափսը հրավերով սահմանվել է նվազագույնը 85.6″, իսկ մասնակցի կողմից նշված մոդելի էկրանի անկյունագծային չափս 75″ է:

Մասնակցի հայտը 1-10-րդ չափաբաժինների գծով մերժվել է և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը հրապարակվել է www.gnumner.am կայքում 2024թվականի մարտի 14-ին:

Եզրակացություն և եզրահանգում

Համաձայն ՀՀ Կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 41-րդ կետի

«Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ……, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն ընթացակարգի շրջանակներում Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա անհամապատասխանությունը այն էր, որ

- հավելված 1.3-ը՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը, կցված չէ:
- 1-ից 10-րդ չափաբաժինների համար լրացված չեն ներկայացված ապրանքի մոդել, ապրանքային նշան, ֆիրմայի անվանում, արտադրողը և տեխնիկական բնութագիր դաշտերը:
- հավելված 1-ը՝ դիմում-հայտարարություն, չի վերաբերվում սույն ընթացակարգին:

Համաձայն ՀՀ Կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 42-րդ կետի

Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: **Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է...**

Մասնակցի կողմից իրականացված շտկման արդյունքում ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերի պայմաններին՝

- 1-9-րդ չափաբաժինների համար լրացված չեն ապրանքի «մոդել», «ապրանքային նշան», «ֆիրմայի անվանում» և «արտադրող» դաշտերը
- 10-րդ չափաբաժնի համար առաջարկվող մոդելի՝ NewLineTT7521Q, տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում մասնակցի կողմից լրացված տեխնիկական բնութագրին, մասնավորապես, էկրանի անկյունագծային չափս (դյույմ) հրավերով սահմանվել է նվազագույնը 85.6″, իսկ մասնակցի կողմից նշված մոդելի էկրանի անկյունագծային չափս 75″ է:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերության «... գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը **կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը** ...»:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6) ենթակետի «ա» պարբերությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Լիազորված մարմնին ներկայացնել «Լա Իմպորտ» ՍՊ ընկերությունը՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 (երկու) տարի ժամկետով ընդգրկելու համար:

ՌԵԿՏՈՐ **Գ.Պ. ՎԱՐԴԱՆՅԱՆ**